

ՊԱՐԳԵՎ ԱՐԲԵՂԱ ԳԵՈՐԳՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ*

17-րդ և 18-րդ դարերում կաթոլիկ պրոպագանդան գործի էր դրել իր ամբողջ կառուցվածքով՝ Արևելքի եկեղեցիները, որոնց թվում և Հայոց եկեղեցին իրեն միացնելու համար։ Հայաստանում, և հատկապես, Կ. Պոլսում, նրանք հաջողվեցին և հայկական աշխարհը կառավարելու, Վատիկանի դրամայի և նրա կողմից լատին միսիոներներին ու հայ կաթոլիկներին տրված առատ դրամի օգնությամբ, տեղի էին ունենում կրոնական կատաղի խռովություններ ու վիճաբանություններ։ Պատճառը հին էր — վիճաբանությունների նյութը հին, իրար դեմ հարուցած մեղադրանքները և արդարացումները՝ դարձյալ հին։ Կար միայն մեկ տարբերություն, որ եթե առաջնորդում, Ռուբինյանների թագավորության օրոք, կաթոլիկ եկեղեցին ձգտում էր հայ պետական իշխանության և բարձր հոգևորականության միջոցով հասնել իր նպատակին՝ դավանափոխ անել ամբողջ հայությունը, վերջ տալ ազգային-եկեղեցական գոյությանը, այժմ հանգամանքները փոխվել էին։ Քվար հայ պետականություն, մնացել էր միայն հայ ժողովուրդը՝ ամբողջ աշխարհով մեկ ցրված, անթիվ ու անհամար տառապանքների բռնի անցած, անպաշտպան ժողովուրդը։ Մնացել էր և իր ժողովրդին բախտակից Հայոց եկեղեցին, որն այլևս չունեի իր նախկին ուժն ու կարողությունը՝ պաշտպանելու իր ցրված հոտին կաթոլիկների ոտնձգություններից։

Պայմանները բարենպաստ էին։ Վատիկանի իշխանավորները, որ դեռ իրենց հույսերը չէին կտրել համաշխարհային տիրապետու-

թյան հասնելուց, աշխատում էին հայերին, մյուս «աղանդավոր» ժողովուրդների հետ միասին, միացնել պապականությանը։

Ինչ 14-րդ դարում Ատրպատականի Սուլթանիա և Մարագա քաղաքներում հաստատված Ֆրանցիսկյան և Բենեդիկտյան կոչված կաթոլիկ կրոնավորները, իրենց քարոզներով և լատին աստվածաբանների գործերի հայերեն թարգմանություններով, կաթոլիկացրին Նախիջևանի, Երնջակի և Զահակի հայ ազգաբնակչության մի մասը ու կազմեցին «միաբաններ», այսինքն՝ Հռոմի եկեղեցու հետ միացողների (լատիններն Unitoris) եղբայրությունը, որ հայտնի է հայ մատենագրության մեջ «ունիթոն» կամ «ախթարմա» անուններով։ 17-րդ դարի սկզբներին այդ նույն շրջաններում կաթոլիկների թիվը հասնում էր 19.000-ի¹։ Այս գործի սկիզբն էր, որից հետո կաթոլիկ պրոպագանդիստները, ունիթոնների հետ միացած, սկսում են իրենց «հոսնալ», որը գնալով հետզհետե ուժեղանում է, մանավանդ, երբ հանդես են գալիս եղվիտները։ Կաթոլիկ եկեղեցու այդ ահարկու գործակալները, որոնց ձեռքին հեծում էր ամբողջ Եվրոպան, 17-րդ դարի վերջերին արշավում են դեպի Արևելք։ Սկզբում նրանք իրավունք են ստանում բնակվել Սպահանում և Շիրազում, հետո, երբ այնտեղից դուրս են թռվում, անցնում են Նոր-Ջուղա։ Այնուհետև, զանազան ժամանակներում, եղվիտական կենտրոններ են հիմնվում Երևանում, Թիֆլիսում, Էրզրումում, Տրապիզոնում և այլ տեղերում։ Եղվիտները գաղափարապես գալլերի նման թափառում են ամե-

* Սկիզբը ամսագրի 1954 թվականի № IX-ում։

1. Հ. Ա. Ալիշան, «Սիոական», Վենետիկ, 1893 թ., էջ 387։

նուրբ և զանազան խարդախ միջոցներով առաջացնում պառակտումներ, խռովություններ և փոխադարձ թշնամություն՝ վաթուղի և ոչ դավանափոխ հայություն միջև:

Ավելորդ չէ ասել, որ այդ բոլոր խառնաշփոթությունների մեջ, բացի Վատիկանից, իրենց գործոն մասնակցություն էին ցույց տալիս ֆրանսիական, պարսկական և թյուրքական իշխանությունները: Սրանցից յուրաքանչյուրն, իր սեփական շահերից ելնելով, պաշտպանում կամ հալածում էր այս կամ այն դավանանքին պատկանող հայերին և, այդպիսով, սկսված խռովություններն է՛լ ավելի սրում ու բորբոքում:

Կարծես այդ բոլորը քիչ էր, Մխիթարյան հայրերն էլ մյուս կողմից էին ուժ ու զորություն տալիս վաթուղիների կատաղի պրոպագանդային: Նրանք, որ մեծ ծառայություններ էին մատուցում հայ լեզվին ու գրականությանը, միաժամանակ, իրենց բոլոր հրատարակությունները, լինեին դրանք կրոնական, գրական և պատմական, շաղախում էին վաթուղի պրոպագանդայով: Այդպիսի բովանդակություն տանեցող հրատարակության օրինակ կարող է ծառայել հայր Միքայել Չամչյանի եռահատոր «Հայոց պատմություն» նշանավոր աշխատությունը, որտեղ հեղինակն ամեն կերպ աշխատում է, որ հայոց պատմության քրիստոնեական շրջանում, սկսած Կրիստոսից, շեշտված լինի Հայ Եկեղեցու հպատակությունը Հռոմին: Ըստ Չամչյանի՝ հայոց նշանավոր վաթուղիականների մեծամասնությունը ճանաչել է պապական աթոռի ուղղափառությունը և գերիշխանությունը: Նա այնքան հեռու է գնում, որ նույնիսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, իր պատմության ամբողջ ընթացքում, անվանում է Էջմիածնի Եկեղեցի:

Պարզ է, որ այդպիսի հանդամանքներում, Մխիթարյանների ցույց տված թշնամական վերաբերմունքը դեպի Հայոց Ազգային Եկեղեցին չէր կարող բարի պտուղներ տալ և պետք է բորբոքեր նոր խռովություններ ու վեճեր՝ կրոնական հողի վրա:

Հայոց Եկեղեցին, որն իր բազմադարյան պատմության ընթացքում իր և իրեն ապավինող ժողովրդի գոյությունը պաշտպանելու համար միշտ պայքարի մեջ է գտնվել, չէր կարող անտարբեր վերաբերմունք ունենալ դեպի Մխիթարյան հայրերի վերոհիշյալ գործունեությունը, մանավանդ, երբ այդ գործունեությունը ընդհանուր ոչինչ չունենա հայ ժողովրդի շահերի հետ, այլ, ընդհակառակը, օժանդակ լինելով Վատիկանի նվաճողական ձգտումներին, ուղղված էր Հայ Եկեղեցու ինքնուրույն գոյության և հայ ժողովրդի ազգապահպանման դեմ:

Առաջին անձնավորությունը, որը քննադատության ենթարկեց և դատափետեց Չամչյանի կաթուղիամուտությունը և կրոնական խիստ նեղմուտությունը, դա Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանն էր: Նա Հնդկաստանի Մադրաս քաղաքում ապրող և իր բոլոր ձեռնարկություններին աջակցող հայ վաճառականների միջոցով 1791 թվականին, առանձին գրքով, հրատարակել է տալիս մի ընդարձակ շրջաբերական նամակ, որն ուղղված էր հնդկահայերին, և որով նա քրնադատելով Չամչյանի գրքում հղած թերությունները, առանձնապես Հայոց Եկեղեցու և հոգևորականության մասին «զատկություն և զխաբէութիւն» պարունակող պատմությունները, զգուշացնում էր ժողովրդին՝ «ընթերցելն զնոսա մի՛ հաւատալ գոյ ի նոսա զճմարտութիւնն, որ ի յառաջաբանութեանն առնէ»: այնուհետև, այդ «քաղցրապատիւ» պատմությունները նպատակ ունեն «զոդանալ միտս պարզամիտ և ջերմեռանդ ազգին մերոյ» ու ճանաչել տալ «զպապն ընդհանուր դուխ Եկեղեցւոյ և զամենայն աղանդս ի նմանէ հնարեալս տալ ազգիս ընդունել, իբրև բանք Քրիստոսի...»:

Միայն այս նամակով չի վերջանում Արղությանի պայքարը կաթուղիական ոտնձգությունների դեմ: Նա շատ լավ հասկանում էր, որ առանց դպրոցի, տպագրական հաստատության և մատենադրական հրատարակությունների, հնարավոր չէ արմատախիլ անել կաթուղիական ցանած որոմը, տառի և որոշում է տպարան հիմնել Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքում ու այն դարձնել գրական մի կենտրոն՝ Հայ Եկեղեցու պաշտպանության համար:

Մյուս վարկեր պատճառը, որ դրդում էր Արղությանին ունենալ իր սեփական տպարանը — այդ ժամանակի քաղաքական իրադարձություններն էին:

18-րդ դարի վերջին քառորդին ոռոսաց կայսրուհի Եկատերինա 2-րդի վառավարությունը մտադրվել էր իրագործել դեռ Պետրոս առաջինի ժամանակվանից մշակված բայց չիրականացված ծրագիրը՝ դուրս դալ կասպից ծով, ապահովել իր հարևան սահմանները և օգնել Անդրկովկասի ժողովուրդներին՝ ազատագրվելու պարսկա-թյուրքական լծից:

Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը, Հովհաննես Լազարյանի հետ միասին, ակտիվ մասնակցում էր Հայաստանի ազատագրման վերաբերյալ տեղի ունեցող խորհրդակցություններին:

Արղությանը ահա այդ բոլորն աչքի առաջ ունենալով, ինչպես վերևում ասացինք, նպատակ ունենալով հայերի մեջ զարթուլ տալ ազգային ինքնագիտակցության արթնացմանը:

Իսկ դրա համար անհրաժեշտ էր, ամենից առաջ, տպարան ունենալ, որտեղ հայ մատենագիրների գործերի հրատարակման հետ միասին, թարգմանել հայերեն և հրատարակել ռուսական ու եվրոպական հեղինակների գրական, պատմական, իմաստասիրական և դատաստանական և այլ աշխատությունները, որպեսզի նրանք վարդալուծ՝ զգոնեալ լինեին մեր զարթոցին ի սեր իմաստասիրության և միաբանության, ...շարժեցին ի նախանձ, և... արիասցին ի յուսմունս և ի փրկություն ազգին, և ծանիցեն՝ զի սակաւ առ սակաւ աճումն և յառաջանալն մարդոյ ի յիմաստս ինչ, յետոյ ի ծայրագոյնն հանէ՞ն։

Վերջապես, Նոր-Նախիջևանում տպարան հիմնելու Յ-րդ պատճառը, եկեղեցական գրքերի հրատարակմամբ, Ռուսաստանի հայերի կրոնական պահանջներին բավարարություն տալն էր։


Բայց տպարան հաստատելը բավական չէր. անհրաժեշտ էր ունենալ կարող ուժեր՝ տպարանը կառավարելու և գիտական ու կրթական աշխատանքներ կատարելու համար։ Այդ նպատակով՝ Արղուժյանը, Հնդկաստանի Սուրաթ քաղաքում բնակվող Հոհաննես Գրաբեյանի ծախքերով, Նոր-Նախիջևանում և նրանից քիչ հեռավորության վրա գտնվող Ս. Խաչ վանքում բաց է անում դպրոցներ, որոնցից վերջինը պետք է ապագայում վերածվեր համալսարանի։

Դպրոցների խնդիրը կարգավորելու հետ միասին, Հովսեփ արքեպիսկոպոսը զբաղվում էր գրքերի տպագրման ծախքերը հոգացող մեկնասաներ գտնելու գործով։ Նամակներ է գրում հայկական դպրոցավարների՝ Կալկաթայի, Բասրայի, Մադրասի, Սուրաթի, Նոր-Զուղայի և Կոստանդնուպոլսի հայ հարուստ վաճառականներին, հորդորելով նրանց հնարավոր եղածին չափ նյութական օգնություն ցույց տալ ազգի ընդհանուր շահերի համար հիմնված դպրոցին ու տպարանին։ Արքեպիսկոպոսի նամակներն ու դիմումները ստանալով՝ հայ հարուստները, որ դրանից առաջ լսել էին նրա գործունեության համբավը, մատուցում են իրենց օգնությունը՝ թե՛ նյութապես և թե՛ կտակների ձևով։ Առանձնապես հատուկ համակրանքով է վերաբերվում Արղուժյանի գործունեությանը 18-րդ դարի հայ ազատագրական շարժման մյուս նշանավոր ներկայացուցիչը՝ Շահամիր Շահամիրյանը, որն իր և առաջնորդի գաղափարների մեջ նմանություններ էր գտնում, այսինքն՝ եկեղեցի ու աղքատանոց շինել, դպրոցներ և տպարան հաստատել, հայոց ազգի ազատագրման համար խնդրել ռուսաց և վրաց կառավարությունների միջամտու-

թյունը և այլն, որոնց պատճառով էլ ոչինչ նյութական օգնություն չի խնայում՝ արքեպիսկոպոսի ձևաարկությունների հաջողության համար։

Ամեն տեսակի դժվարությունները հաղթահարվելուց հետո, տպարանը, որ Նոր-Նախիջևան էր տեղափոխվել 1789 թվականին, տեղավորվում է Ս. Խաչ վանքում և 1790 թվականից մինչև 1796 թվականը, Խոջենց Մարգարիտ² ջերմ գործակցությամբ, լույս է ընծայում 17 անուն գիրք։

1790 թվականին Արղուժյանի տպարանը հրատարակում է հետևյալ գրքերն ու գրքույկները.



1790 թվականին, Նոր-Նախիջևանում, Հովսեփ արքեպիսկոպոս Արղուժյանի տպարանից լույս տեսած Ստեփանոս Օրբելյանի «Ողբի և հառաչանք» գրքի տիտղոսաբերը։

«Կանոն Սաղմուսաց», «Գանձաբան ախտականութեան», «Գիրք որ կոչի Ազօքամառոյց», Ալեքսանդր կաթողիկոս Զուղայեցու,

2. Խոճենց Մարգար Երևանցին, շնորհիվ իտալերեն, ֆրանսերեն, պարսկերեն, արաբերեն և թյուրքերեն լեզուների բաշ գիտնալուն, իր ժամանակ շատ կրթված և գիտուն մարդու հուշակ է ունեցել։ Նա, լսելով Հովսեփ արքեպիսկոպոսի հայրենասիրական գործունեության համբավը, ոգևորվում է և Զմութնիայից գնում է Ռուսաստան և այնտեղ հանությունը ընդուն-

1. «Արարատ», 1888 թ., էջ 368։

«Գիրք աղօթից որ կաշի գրասարան հոգևոր»,
Միմեոն կաթողիկոսի:

1790 թվականին դարձյալ նորին բարձր
Արքապետական Նոր-Նախիջևանի Ս. հաշ-
վանքի տպարանից լույս է տեսնում Ստեփա-
նոս Օրբելյանի «Ողբք և հառաչանք»: Գրքի
լրիվ վերնագիրն այս է. «Ողբք և հառաչանք
ի դիմաց մօրն մերոյ Արքայ Աթոռոյն էջ-
միածնի: Արարեալ Տեառն Ստեփանեոսի նա-
խագահ մետրոպոլիտին Սիմեոնաց՝ որդւոյ
Տարսալիճ իշխանին, ի խնդրոյ շնորհա-



1790 թվականին, Նոր-Նախիջևանում, Հով-
սեփ արքեպիսկոպոս Արդուրյանի տպարա-
նից լույս տեսած Ստեփանոս Օրբելյանի
«Ողբք և հառաչանք» գրքի սկզբում գետեղ-
ված Ս. էջմիածնի Կաթողիկե Մայր
Տաճարի եկարք:

վում Հովսեփ արքադանի կողմից, վերջինս խոստանում
է իր տպարանում տպագրել տալ նրա գործերը: Ար-
դուրյանի տպարանի փակվելուց հետո, կոռնեց Մար-
գարը մնացել է Ռուսաստանում և, ինչպես երևում է
իր աշխատություններից մեկի վրա գրված «Նազդվոր
սովեանիկ» տիտղոսից, պետական ծառայության մեջ
մտել: Նրա գրական աշխատություններից մի բանիոր,

զարդ սուրբ վարդապետին հաշատրոյ Կեշա-
ռեցւոյ. ի Չեմ թոականիս մերոյ: Գիրքը
լույս է տեսել «Հրամանաւ և ծախիւր» Սուրբ
Աթոռոյն էջմիածնի ծալրագոյն նուիրակ՝
Ռուսաց երկրի ամենայն ազգիս Հայոց՝ ա-
ռաքելաշաւիդ առաջնորդ՝ Տեառն Յովսէփայ
Արքադան Արքեպիսկոպոսի Սանահնեցւոյ
Արդութեանց: Գիրքն ունի 11,5×17 սմ. մե-
ծություն և բաղկացած է 80 էջից: Գրքի
սկզբում կա էջմիածնի Կաթողիկե Մայր
Տաճարի նկարը, որի տակ գրված է հետևյալ
չափածո քառյակը.

«Տաճար լուսակերտ՝ յարկ ապակինի.

Յատկագոյն պարծանք Արամեան ազգի.

Ժողովեա՛ առ քեզ՝ ըզմանկունքս քո.

Որք ի քէն մեկնեալ՝ կան այժմ արտաքոյ:»

Գրքում գետեղված է նաև Հովսեփ արքե-
պիսկոպոս Արդությանի «Վերջաբանութիւն
համառօտ և գոհացողական բանիւ բարբա-
ռումն՝ առ լուսանկար մայրս մեր Սուրբ էջ-
միածին» վերնագրով արտադրեցիկ գրությու-
նը, որտեղ նախ նկարագրվում են էջմիածնի
վրայով անցած քաղաքային արհամիրը-
ներն ու մինչև վերջ նրա կանգուն մնալը:
«Բայց դու ի սկզբանէ անտի մինչև ցայսօր,
— գրում է նա, — իբրև զվէմ անպարտելի՝
հաստատուն կացեր ի վերայ վիմին ճշմար-
տութեան, որ ոչ դրունք դժոխոց և ոչ բրո-
նութիւնք հակառակորդաց՝ զքեզ յաղթահա-
րել կարացին. այլ՝ իբրև զմրրիկ անցին
զքե...»

«Եսկ արդ՝ տ՛ւր եղան, տ՛ւր եղան նախնի
հալածիչքն քոյ, ո՛վ լուսատու մարդ մեր
Սուրբ էջմիածին: Անցին նոքա իբրև զհե-
ղեղս ջուրց՝ և տշ են, խնդրեմք զտեղի նոցա,
և ոչ զտանեմք: Աստուծոյ փառք, որ զնոսա
մեք տշ տեսաք, այլ զուրախալի գերեսս քոյ
տեսանեմք:

«...Ապա տեսանեմք, զի որու յաղթեցեր
զնոսա համբերութեամբ քով. բնկողմեցեր
զնոսա արտասուօք քովք, և մարմնով քով
դարձուցեր զնետս նոցա. և արեամբ քով՝
շիջուցեր զհուր նոցա. և խայտառակեցեր
զնոսա՝ երկարատև լուսով քով:

«Խնդա ուրեմն, և գուարճացիր. Եկեղեցիդ
Քրիստոսի, կոյս սուրբ, տապալն սրբասնեալ
ճշմարտութեամբ. մեծ արա՛ դարերարն
քոյ գտէր. և մերկեա՛ զհանդերձ լկանաց
քոց, դադարեցո զլալդ, մեղմացո զաղա-
ղակդ. և բարձրացոյ իբրև զփողոյ զբարբառ

որ կրոնա-բարոյախոսական բովանդակություն ունեն,
տպագրվել են Պետրոգրադում 19-րդ դարի վերջին
քառորդին: Այդ տպագրությունների մեջ է մտնում
նաև ավետարանի թուրքերեն թարգմանությունը
(տե՛ս «Սիրոն» ամսագիր, Երուսաղեմ, 1886 թ., էջ
106—119):

քոյ՝ ընդ ամենայն ծագն երկրի. քանզի՝ հիմունք քոյ հաստատուի էն՝ ի վերայ անշարժ վիժին:

«...Աղաչեմ ուրեմն՝ զներող մայրութիւն քոյ, ընկալ զզոյաւ սրտիս և զպտուղ շքրթանցս, և խառնեալ զիս ի թիւս աշնոցիկ՝ տրբ յախտեանական սիրով սիրեցին զքեզ՝ առանց դրդմանց: Եւ մայրական գթութեամբ քով շնորհեալ զբաւութիւն սխալանաց՝ դառնալ ի ստինս սուրբ մայրութեան քոյ, և խառնիլ ի գունդս լուսածնունդ որդուց քոց, որովք պայծառացեալ վերջնովք՝ քան առաջնովքն, եղիցիս հաստատուն միշտ սրբազնասուրբ փեսայիւդ, շնորհօք՝ զքեզ կերտողին Աստուծոյ, ամէն»:

Գրքում կան նաև հայ թագավորական տների զինանշանների բացատրությունները:

«Ողբք և հառաչանք»ի հրատարակությունը Արղուժյանի կողմից պատահական երևույթ չէր: Օրբելյանի այդ գործը, ինչպես նկատում է ալիագեմեթիկոս Մանուկ Աբեղյանը, «այլևս ոչ թե լոկ ողբ էր, ոչ թե տարագիր ժողովրդին հավաքելու և փրկելու մի տարտամ իղծ և աղոթք էր, որ երգել էր դեռ Հովհաննես Սարկավազ վարդապետը, ոչ թե մի երազ արևմտյան աղգերի ձևով փրկվելու արեւելյան քրիստոնեություն հետ, այլ քաղաքում էր վերջ տալ ողբանքին, խնամ տանել սեփական երկրին, ձգտել բնիկ երկրում ունենալու եկեղեցական վիճակը, և Արարաւան դաշտում, իր նախնիներ մայրում, վերանորոգելու Հայոց թագավորական դահլիճը»: Այդ բուն հայաստանցիների իղծերի ու տենչերի արտահայտությունն էր:

Արղուժյանը, որ Լազարյանի հետ ամբողջ հոգով աշխատում էր ռուսական զորքի տուժով վերականգնել հայ ժողովրդի պետականությունը, առաջին անգամ լույս տնծայելով դեռ դարեր առաջ Ստեփանոս Օրբելյանի կողմից գրված սույն գրվածքը, իրեն որպես նպատակ էր ընտրել Սիլվուսթրուս ցրված հայերին կապել մայր հողի հետ և նրանց պատրաստել նոր ապագայի: Ահա թե ինչու Արղուժյան արքեպիսկոպոսը դեռևս 1786 թվականին ճարելով այս գրվածքի ձեռագիրը ուղարկել էր Խաղարչյանին, և խնդրել, որ անպայման տալի այն: Արղուժյանը 1786 թվականի հոկտեմբերի 18-ին Գրիգոր Խաղարչյանին իր գրած նամակում խորհուրդ էր տալիս ասելով. «Բարաճնական ոտանաւորն ի դէմս սուրբ էջմիածնի որ անցեալ ամին առաքեալ եմ առ քեզ... շնորհ արարեալ տպեցես մինչև հիմզ հարիւր հատ յառաջն դիցես Սուրբ էջմիածնա պատկերքն, կազմն բոլորիցն թղթով լինիցի, և մինչև

առ մեզ ոչ առաքես, առ ումեք շտայցես»²: Բայց մեզ անհայտ պատճառների հետևանքով գիրքը այն ժամանակ լույս չտեսավ:

Ներսես Շնորհալու «Ընդհանրական»ից հետո «Ողբք և հառաչանք»ի հրատարակությունը մի նոր խոշոր նվաճում էր Արղուժյանի տպարանի համար. ահա թե ինչու նույն զորքի հիշատակարանում հրատարակիչները մեծ բերկրանքով էին ողջունում այս զորքի երևան դալը որպես նշանակալից դեպք. «Եւ երկրորդ լեւո նորին (այսինքն Ներսես Շնորհալու «Ընդհանրական»ից հետո:— Պ. Ա. Գ.)՝ քաղցրախորժս այս զարմանալի ողբադուրթութիւն՝ այցելութիւն Սիննեաց Տեառն Սոսփաննոսի նախագահ մետրապոլիտին, համեզ ի լընթերցումն՝ և պիտանի ի մտառութիւն, փոքրիկ ըստ քանակութեան՝ բայց արդեամբ հաւասար մեծագոյնից սկսյալ մատենից, դմանանեալ սերմանն՝ զտիրական առակ՝ ճշմարտապէս և իրականաբար յինքեան տանող, որ չորս հարիւր իննսուն և մի ամ համբեր մեծաւ երկայնմտութեամբ այցելութեան Տեառն սպասելով, անկեալ ի խորշս զըրբատանց»:

1791 թվականին Հնդկաստանի Սուրաթ քաղաքում բնակվող Աղաբաբյան Ստեփանոսի և իր կնոջ Հռիփսիմեի ծախքերով, տպագրվում են «Կարճագոտ ժամագիրք» և «Մաղմուսարան»:

1792 թվականին լույս է տեսնում «Բուռն ողորմութեան» տետրակը, որը մի ներբողական գրվածք է Արղուժյանի հիմնած Գրիգորիտայով հայաքաղաքին Եկատերինա 2-րդից տրված հրովարտակի, քաղաքի հիմնադրման հանդեսի, Արղուժյանի այդ առթիվ կատարած ատենաբանության մասին: Հեղինակը Խոճենց Մարգար Սրեկանցին է: Ահա՛ այդ աշխատության տիտղոսը. «Տեսարակ համառօտ անուանեալ Դուռն ողորմութեան, լորում ցուցանի նախ հրովարտակն գթութեան ամենաբարեպաշտ և մեծ Այալուհի ինքնակալ թագուհւոյն Եկատերինէի երկրորդի, սակա Գրիգորիտայոյ նոր քաղաքին Հայոց. ձեռամբ բարձր Սրբազնութեան Տեառն Յովսէփայ աստուածարեւալ Արհի եպիսկոպոսին օծմամբ հիմնարկեցման: Եւ երկրորդ հիասքանչ հանդէս հիմնարկութեան նոյն Գրիգորիտայոյ քաղաքին Հայոց: Զկնի որոյ և զհրաշալի ատենաբանութիւն ի նոյն հանդիսին նորին բարձր Սրբազնութեան լատով տնիւթ տալի: Տպեալ ի զուարճութիւն սրտի մերս հարկադնէից, յամի Տեառն 1792 նոյեմբերի 20, ի Սուրբ Խաչ վանքն, որ ի նորն նախիջեան»:

(Շարունակելի)

1. Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», գիրք երկրորդ, Նրևան, 1946 թ., էջ 227:

2. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2949, Թ. 24ր: